



ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՇԱՌԱՅ ԵՎ ՇՆՈՐՀԻ ՆՈՐԻՆ ՏԵՐ ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՒՑ ԵՎ ՇԱՅՐԱԴՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ԲԱՐՁՐԱ-
ԿԱՀ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՄՐՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ Էջմիածնի:

Ողջոյն Քրիստոնէական նուիրեմք սիրով
և օրշութեամբ բազմա Գերապատիւ սրբա-
զան Կրիգոր արքեպիսկոպոս սիրեցեալ հա-
րազարդ սրբոյ Աթոռոյս և մեր ուրախ լի-
նիլ ի Տէր:

Հերկոսին որպիսածանոյց գրութիւնսդ առ
ընկալեալ ըստ ժամանակին, ուրախ լեալ
եմք յոյժ վասն բարի առողջութեան ձերոյ և
յաղագս օր քան զօր առաւելութեան չերմ
սիրոյդ և հարազատութեանդ առ սուրբ Ա-
թոռս, առ մեզ և առ բոլոր միաբանութիւն
մեր սրտադիւր եղեալ և միսիթարեալ յամե-
նայնի:

Որպէս յայտնի է և ձեզ զիարդութիւն կա-
ռավարութեան գահակալացն սրբոյ Աթոռոյս
ընդ իշխողացն երկրիս ըստ բերմանց ժա-
մանակին, մեք ևս ի ներկայս վասն ինչ, ինչ
հարկաւորաց եկեալ էաք աստ յերեան ի տե-
սութիւն և ի իշուակցութիւն ընդ բարձրապա-
տիւ դովլաթլու սարտարին տեղույս, և յա-
ջողութեամբ Տեառն Աստուծոյ, որ ի ձեռին
ունի զիիրտս ամենայն իշխողաց. բարեսէս
յաջողեալ ամենայն խնդիր մեր ի նմանէ,
գտաք զապահովութիւն յամենայն դիմաց՝
թէ կողմանէ գիւղիցն մերոց և թէ այլոցն
թէ զանազան զբաղմունք հոգսակրութեանց
վասն կառավարութեան սրբոյ Տանն Աստու-
ծոյ յայսմիկ պակասաւոր նեղ ժամանակի՝
ոչ թոյլ տան մեղ ունիլ բնաւ զյանդորու-
թեան:

Ցիշեալ երկոքին գրութիւնքն ձեր մնացեալ
գոլով անդ ի սուրբ Աթոռս, որ ինչ ի նշա-
նաւոր բանից անտի եկն ի միտս, արժան
վարկաք պատասխանել ձեզ աստէն համա-
ռոտիւ:

Յաղագս ծանուցանելոյդ զզանազան մե-
ղապատկան որպէսութիւնս և մանաւանդ ա-
մատելոյդ զկրկին կալանաւորութիւնն բռնաւո-
րին տինզպերաց և զառաւել գերազանցու-
թեամբ բարձրանալն ամենաբարեպաշտ և ա-
մենապղորմած ինքնակալ մեծ Կայսերն ա-
մենայն Խորաց, թե ո՞քան անպատում հըր-
ճուանօք առցեալ փառս և գոհութիւնս վե-
րառագեցաք առ Ամենաբարձրեալն Աստուծած
և զո՞քան օրհնութիւնս և խնդրուածն մա-
տուցաք նմա և մատուցանեմք բոլոր միա-
բանութեամբ վասն զօրութիւնն և վասն եր-
կարութիւնն անգին կինաց Նորին Կայսերա-
կան Մեծութեան և ամենայն զօրաց և զօրա-
պետաց Նորին, արդարեւ չչ' կարելի բովան-
դակել ընդ գրով. ուստի մեծապէս շնորհա-
կալ եղեալ զձէնչ, օրհնեցաք, և օրհնմէք
զարժանաւորդ օրհնութիւնս, որ պարարեցեր
զուգիրս մեր այնպիսի համբաւովք բարու-
թեան:

Ուրախ եղաք նաև ո՛չ սակաւ վասն ատ-
րածման ի վերայ ձեր զանազան կերպի
շնորհաց և ողորմութեանց Նորին Կայսերա-
կան Մեծութեան ոռնիկ կարգելոյն և այլն,
ի ձեռն Նորին Պայծառափալութեան կինազ
Գոլիցինի բարերար Հօրն հոգևորականաց ա-
մենայն ազգի, առ որ և բախտաւոր համա-
րիմք զձեղ, ըստ որում ո՛չ միայն արժանի
եղէք այնպիսի կայսերական շնորհացն և ո-
ղորմութեանցն, այլ և դուք եղէք սկիզբն և
պատճառ ծաւալման նոյնպիսի շնորհաց և
ողորմութեանց և ի վերայ այլոց մերայնոցն,
որպէս և զկնի ձեր՝ սրբազան Յօհաննէս ար-
քապիսկոպոսն Ռուսաստանու Հայոց ընկալ-
նելով զայնպիսի շնորհս ողորմութիւն յԱ-

մենառորմած Աթոռոյ նորին Կայսերական Մեծութեան գրեալ ծանուցեալ էր մեզ, նոյնպէս և Վրաստանու Հայոց սրբազնան ներսէս արքեպիսկոպոսն ևս ընկալնելով զգեղեցիկ բարի առաջադրութիւնս ի նորին Պայծառափայլութենէ յաղաբս բարեկարգութեան վիճակի իրոյ; լետ լրացուցանելոյ զնոյն, աներկբայ եմք, զի նա ևս ունի արժանանալ շնորհաց և ողորմութեանց ի նորին Կայսերական Մեծութեան յամենառողորմած Աթոռոյ, զոր հաստատում պահնեցէ Տէր մինչև ցկատարած յաշխարճի ի պարծանս սուրբ խաչին իրոյ և ի հովանաւորութիւն ամենայն Քրիստոնէից և յատկապէս անայցելու ազգիս մերոյ:

Սուրբ Երոսապէմի նուիրակ Կարապետ վարդապետի բարեմանութիւնս գրեալ էիք գովութեամբ իրափ՝ ուրախ եղաք ո՛չ սակաւ, երանի՞ եթէ բազումք ի վարդապետաց մերոց վարդարեալ լինէին նոյնպիսի բարեմանութեամբք, ի միխիթարութիւն ազգին և յուրախութիւն մեր:

Անտի ի սուրբ Երոսապէմայ յանցեալսն եկեալ էին ևս երեք եպիսկոպոսուր ի սուրբ Աթոռու մին քան զմիս զերազանցեալ բարեմանութեամբք, որք էին տեղւոյն աւագ լուսարար Սիմէօն վարդապետն, Հնդու նուիրակ Կարապետ վարդապետն, և մուսաւատշի քաջ գիտնական և ճարտարաբան Դիոնէսիս վարդապետն. զորս ո՛չ անազան ձեռնադրեալ եպիսկոպոս և սիրաշահեալ ամենայն պարագայիւք մարդասիրութեան ըստ արժանուց յարգութեան իրեանց. զՍիմէօն և Կարապետ եպիսկոպոսուն ուղևորեցաք դէպ ի մեծն Պօլիս, և գԴիոնէսիս եպիսկոպոսն պահեցաք առ մեզ ի սուրբ Աթոռու. քանզի՞ անդ ի մեծն Պօլիս սրբազն Պատրիարքն և սուրբ Երոսապէմայ վէքիլ Պօլոս վարդապետն բոլոր խորհրդական ամիրայիւք ի խորհուրդ մտեալ վասն գտանելոյ զհնարա աղասութիւն ի 3.000 քէսայ պարտուցն, որով նեղի մինչև ցայսօր սուրբ Աթոռու Երուսաղէմայ, արժանի էին համարեալ կոչել անդ առ ինքեանս առ ի խորհրդակցութիւն զերևէլի միաբանսն նորին, թէ զեղեալսն ի սուրբ Աթոռու անդ և թէ ի վիճակս նուիրակութեան. վասն որոյ որպէս ի Զմիւրին և այլ վիճակս գրեալ էին առ երևելի նուիրակ վարդապետն և եպիսկոպոսուն մողովիլ անդ ի մեծն Պօլիս, նոյնպէս յիշեալ սրբազն Պատրիարքն և վէքիլ Պօլոս արքեպիսկոպոսն գրեալ էին մեզ վասն յիշեալ առ մեզ եկեալ եպիսկոպոսուացն այցն, զի զնոցին երկուսն ուղևորեցուր առ ինքեանս, և զմինն պահեցուր առ մեզ /մինչև ցայսիս աղասիս անազան Պատրիարքն և վէքիլ Պօլոս արքեպիսկոպոսն, և մտադրեալ եմք առաքել ևս զոմանս ի քանի պատշաճաւոր տեղիս: Հստ որոյ ի գոյն յայդ փոքր վիճակի քում ևս յորոց կարելի իցէ՝ ի զիմաց մերոց ողջոյնն և օրհնութիւն տուեալ սիրով, զկամաւոր իմտատիայս ինդրիսցին վասն նորոգութեան տանեացն սրոյ Աթոռոյս. զի այժմ այնպիսի ժամանակ է, որ փոքր նուէրքն՝ մեծ է հանդիսանալոց առաջի

գրութիւնս իրեանց առ մեզ վասն նոյն մը նացողին ի սուրբ Աթոռու մեր:

Իրափ իրափ՝ ցափմք յամենայն սրտէ վասն այնպիսի նեղութիւն սուրբ Աթոռուն Երոսապէմի, այլ զի՞նչ կարեմք առնել, եթէ ո՛չ ինդրել ամենազերպմեռանդ աղօթիւր, զի նա ինքն Աստուած այց արացէ երկուց սուրբ աթոռուցն իւրց՝ ազատելով ի պարաւուց և յամենայն նեղութեանց. քանզի ահա սուրբ Աթոռ մալրս լուսոյ ևս՝ թէպէտ ի մասին հոգեռորական վայելլութեանց վայելլացեալ է աւելի և վայելլանայ օր քան զօր գերքան զառաջինն. այլ ի մասին մարմնական պիտոյից և հարկաւորաց զրկեալ կայ, մինչ իսպառ մինչև հայմայթանօր և օր ըստ օրական պարտուք անցուցանել զաւուրս և զըկեանս մեր, և ազգ մեր ևս գոլով ընդ ամենայն տեղիս ի յանշաջողութեան թէ ի կողմանէ իսպանման ափցն և տրիցն և թէ ալլոցն պատճառաց, չի՞ք յուատեքէ օգնականութիւն ազատութեան մեղ ի պարտուք, որ գիզեալ լինի օր քան զօր կուտակութեամբ ըստ պահանջման հարկին՝ մանաւանդ ի ներկայս, որ մեծ ծախուք սկզբնաւորեալ եմք նորոգել տալ զիսախտեալ տանիսն աստուածակերտ սրբոյ Տաճարին. առ որ կարելի է թէպէտ. զի ասացեն ոմանք յազգէս մերմէ թէ յայսպիսի նեղ ժամանակիս ի՞նչ հարկ էր այնպիսի մեծածախս գործառնութեան ձեռնամուխ լինիլ. որոց զայս տամք պատասխանի. զի՞նչ առնեաք ապա, զի եթէ ո՛չ փութացաք ձեռնամուխ լինիլ. յայնժամ օր քան զօր առաւել լինէր խախտումն, և մի ծախսն՝ բազմապատիկ յոյժ. մինչև դժուարին լինէր ազգովին ևս նորոգելն, և մեք լինէաք մեղադրելի յազգէն մերմէ. զայսպիսի բարբառելով նոցա առ մեզ՝ թո՞ղ գու պարտուք հոգ տանէիր նորոգութեան, յետոյ զհատուցումն պարտուց ի մէնջ ինդրէիր, և այլն, զայսոսիկ ևս մտածեալ մեր. հարկ յանձին կալաք ձեռնամուխ լինիլ, յասալով նախ յԱստուծոյ և ապա յօգնականութիւն աղքատ ժողովրդեանն մերոյ, որոյ վասն և ի կողմունս Հնդկաց յատկապէս իմտատիանի առաքեցաք զյարդելի Վրթանէս արքեպիսկոպոսն, և մտադրեալ եմք առաքել ևս զոմանս ի քանի պատշաճաւոր տեղիս: Հստ որոյ ի գոյն յայդ փոքր վիճակի քում ևս յորոց կարելի իցէ՝ ի զիմաց մերոց ողջոյնն և օրհնութիւն տուեալ սիրով, զկամաւոր իմտատիայս ինդրիսցին վասն նորոգութեան տանեացն սրոյ Աթոռոյս. զի այժմ այնպիսի ժամանակ է, որ փոքր նուէրքն՝ մեծ է հանդիսանալոց առաջի

Հոգևոր մայրութեան ոորին՝ որպէս և դու
սիրեցիալ հարազատդ մեր մինչ առաքեալ
էիր զնուէրս նուիրակութեան օրնեալ վի-
ճակիդ՝ որ է հարիւր պաճախլու ոսկի, թէ-
պէս և տակափն չէ՛ հասեալ, այլ յանձնե-
ցեալ է ի Մօզդոկ ուրումն հարազատի առ ի
հասուցանել, որպէս և գրեալ է ձեզ ի հարկէ
Տէր Մելիքսէթ աւագ քահանայն Դամաղեան,
սակայն իբրև հասեալ համարելով, այժմէն
իսկ մատուցանեմք անա զշնորհակալութիւն,
օրհնելով զքեզ և զըրհնեալ մողովուրդսդ,
զորս Տէր օրհնեսցէ իւր անանցանելի օրհ-
նութեամբն, վարձատրելով յամենայնի, նո-
ցա՝ լսու տրոցն, քեզ՝ ըստ աշխատանացն։
Իսկ վասն բաժանեալ վիճակին Ուսումէլ-
ւոյ, զոր գրեալ էիր՝ զալլ ոք նուիրակ առա-
քել անդ, Պօլսոյ սրբազան Պատրիարքն ևա
գրեալ էր՝ կամ առաքել զոք, և կամ զկոն-
դակն և զսուրբ միւռոնն առ ինքն լուել, զի
անտի վարդապետաց իւրոց զոմն առաքեսցէ
անդ։

Մեք քանի ամսով յառաջ զայս՝ զկոնդակն
և զսուրբ Միւռոնն առաքելով առ լիշեալ
սրբազան Պատրիարքն, զրեցաք նմա, զի

անդ եղեալ մեր գտնածակաց վերակացու-
Աստուածատուր արքեպիսկոպոսին պօլսեց-
ւոյ՝ առաջադրեսցէ ի զիմաց մերոց. եթէ
յանձնառու լիցի, զնա առաքեսցէ Կոնդական
և սրբալոյս մեռնաւ, իսկ եթէ նա ոչ յանձ-
նառցէ, յայնժամ զայլ ոք առաքեսցէ։ Ալժն
ակն ոնիմք թէ մինչև ցարդ՝ կամ զլիշեալ
արքեպիսկոպոսն առաքեալ իցէ անդ նուփ-
րակ, և կամ զայլ ոք, զոր ի հարկէ լուսալ
լինիք և զուք։ Որոյ վասն զրեմք սիրեցիալ
հարազատիդ մերում, զի ով ոք և եկեալ իցէ.
կամ ոնիցի գալ, զու զքեղապատկան օդ-
նականութիւնս մի՛ խնայեսցիս ի նմանէ թէ
գրով առ սրս արծանն է, և թէ այլով ամե-
նայնիւ ի յօգուտ սրբոյ Տանս և ի բազմա-
պատիւ քեզ շնորհաց մօրս լուսոյ և վարձուց
անախտ փեսայի սորին, և շնորհակալութիւն
և օրհնութիւն մեր հանդերձ արժանաւոր գո-
վութեամբ։

Յաւել քան զայս յանձն առնելով զքեզ և
զվիճակդ ի շնորհս խնամոց և պահպանու-
թեան Տեառն Աստուծոյ, և յանկանալով
միշտ ախորժելի լրոյ բարի առողջութիւն ձե-
րոյ և այլ մեղապատկան գիտելեաց ի ձենց։

Մնամք ի սրտէ ձեզ միշտ բարեացակամ

Կարողիկոս Ամենայն Հայոց ԵՓԲԵՄ

1815 սեպտեմբերի 25
Յանապատս մեր, որ յնրևան^{*})

^{*}) ՀՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ
№ 57, գոռծ № 24, էջ 21—22։

